13 հունիսի 2013 թվականի N 667 - Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 21-Ի N 165-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՈՒ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ Մ Ա Ս Ի Ն

Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության 2013 թվականի փետրվարի 21-ի «Հայաստանի Հանրապետությունում 2013 թվականի գարնանացանի համար գարու, եգիպտացորենի, առվույտի և կորնգանի արտադրության զարգացման ծրագիրը հաստատելու և ֆինանսական միջոցների օգտագործումը թույլատրելու մասին» N 165-Ն որոշման հավելվածում կատարել հետևյալ փոփոխություններն ու լրացումները՝

1) 15-րդ և 16-րդ կետերում «11.0» թիվը փոխարինել «9.5», «37.0» թիվը՝ «52.1» և «490» թիվը՝ «360» թվերով.

2) 19-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«19. Հայաստանի Հանրապետության մարզպետարաններին 850 տոննա գարնանացան գարու, 9,5 տոննա եգիպտացորենի, 52,1 տոննա առվույտի և 400 տոննա կորնգանի սերմացուները պետք է հատկացնել հետևյալ չափաքանակներով՝

NN ը/կ	Մարզի անվանումը	Հատկացվող սերմացուների քանակը (տոննա)			
		գարնանացան գարու սերմացու	եգիպտացորենի սերմացու	առվույտի սերմացու	կորնգանի սերմացու
1.	Արագածոտն	100	2	9	59.9
2.	Արարատ	7.99	0.575	4.47	0
3.	Արմավիր	7	0	4.63	0
4.	Գեղարքունիք	84.365	0	6	60
5.	Լոռի	50	4	5	6.5
6.	Կոտայք	44	0	0	2.7
7.	Շիրակ	107	1.025	10.35	144.4
8.	Սյունիք	400	0.75	11	124.5
9.	Վայոց ձոր	40	0.225	0.15	1
10.	Տավուշ	9.645	0.225	1.5	1
	Ընդամենը	850	8.8	52.1	400

1) 700 կիլոգրամ եգիպտացորենի սերմացու հատկացնել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Քաշաթաղի համայնքին:».

3) 20-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«20. «Սերմերի գործակալություն» պետական ոչ առևտրային կազմակերպության կողմից Հայաստանի Հանրապետության մարզպետարաններին սերմացուները հատկացվում են համապատասխան մարզկենտրոններում՝ գործակալության և համապատասխան մարզպետարանների միջև կնքված պայմանագրերի հիման վրա:».

4) հավելվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 21^1-րդ և 21^2-րդ կետերով.

«21^1. Հայաստանի Հանրապետության մարզպետարաններին հատկացված, սակայն հողօգտագործողների կողմից պահանջարկի բացակայության պատճառով չիրացված սերմացուների հետագա պահպանության և դրանց իրացման աշխատանքների պատասխանատվությունը վերապահել Հայաստանի Հանրապետության համապատասխան մարզպետարաններին՝ 2014 թվականի գարնանը հողօգտագործողներին սույն ծրագրի դրույթներին համապատասխան հատկացնելու նպատակով:

21[2]. Հայաստանի Հանրապետության մարզպետները մինչև 2013 թվականի հունիսի 20-ը Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարություն են ներկայացնում տեղեկատվություն Հայաստանի Հանրապետության մարզպետարան-ներին հատկացված, սակայն հողօգտագործողների կողմից պահանջարկի բացակայու-թյան պատճառով չիրացված սերմացուների մասին, իսկ 2014 թվականի գարնանը, սույն ծրագրի դրույթներին համապատասխան, հողօգտագործողներին հատկացնելուց հետո՝ սերմացուների այդ խմբաքանակի մասին՝ սույն ծրագրով նախատեսված ամբողջական տեղեկատվությունը:»:

2. Սահմանել, որ Հայաստանի Հանրապետությունում 2013 թվականի գարնանացանի համար գարու, եգիպտացորենի, առվույտի և կորնգանի արտադրության զարգացման ծրագրի իրականացման ընթացքի նկատմամբ հսկողությունն իրականացվում է Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության կողմից:

3. Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարին՝ ամփոփ հաշվետվություն ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության աշխա-տակազմ՝ ծրագրի ավարտից հետո մեկ ամսվա ընթացքում:

4. Հայաստանի Հանրապետության մարզպետներին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում կնքել սույն որոշման 1-ին կետի 3-րդ ենթակետով սահմանված պայմանագրերը կամ կնքված պայմանագրերում կատարել համապատասխան փոփոխություններ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Տ. ՍԱՐԳՍՅԱՆ